որ գնված էր 400 րուբլով։ Նա սկսեց բանեցնել մեքենան քաղաքի մօտակայ արտերում, գլխաւորապէս ազնուականների կալուածների վրա. իւրաքանչիւր օր հնձում է մօտ 10 օրավար 2 րուբլի ստանալով։ Այս մեքենան մեծ դիւրութիւններ կարող է տալ գիւղացիներին, եթէ նրանք թողնեն հնձելու հին, նահապետական ձևը։ Եթէ մի գիւղացու կարողութիւնից դուրս է 400 րուբլի վճարել այս տեսակ մեքենայ գնելու համար, կարող են մի քանիսը միասին ընկերութեամբ գնել։

Ստացանք ԴՈՒԽԲԷԼՆ քաղաքից, Լիֆլիանդիայից 3 րուբլ յօգուտ Թիւրքաց Հայաստանի սովատանջների։ Այդ փողից երկու րուբլ վճարել է մի անյայտ հայ պարոն, իսկ 1 րուբլ, մի գերմանացի պարոն։

ՄԱՑԿՕՊԻՑ, գաւառական բժիշկ Ստեփան Ալիխանեանցից ստացանք 10 րուբլ յօգուտ Հայաստանի սովատանջների։

ԱԽԱԼՔԱԼԱՔԻՑ, պ. Ա. Գրիգորեանից ստացանք 64 րուբլ, 20 կօպէկ հետևեալ նամակով. «Այսօր ստանալով անցեալ ամսի 13-ին պ. Ադամեանի և իր խմբի «Արշակ II» ներկայացնելու միջոցին պ. Յակովբ Տէր-Յովհաննիսեանցի ձեռքով հաւաքված 64 րուբլ 20 կ. յօգուտ Վանի սովելոց, շտապում եմ ուղարկել ձեզ. փոստայի ծախսը ես եմ յանձն առել»։

ՆՈՒԽՈՒՑ գրում են. օգոստոսի 6-ին, երեկոյեան ժամը 8-ին դարձեալ նոր սպանութիւն պատահեց։ Դշլաղի (քաղաքի արուարձան) մօտ անյայտ աւազակներ յարձակվելով քաղաքը բոժոժ բերող սայլապանի վրա, դաշոյնով սպանում են, յետ էլ վիրաւորելով փախչում են։ Բոժոժին ձեռք չեն տալիս։

Մեզ գրում են ՆՈՒԽՈՒՑ, որ հայերի թաղում հրդեհ պատահեց, այրվեցան երկու տներ, որոնք ապահովացրած չէին։ Տների ապահովացնելը սովորութիւն չը լինելով այս քաղաքում, երբ պատահում են հրդեհներ, ամբողջ ընտանիքներ ենթարկվում են դառն աղքատութեան։

ՆՈՒԽՈՒՑ գրում են. Պարսկաստանից եկած էին այստեղ երեք դէրվիշներ. մէկը մի թուրքից պահանջում է իբրև նուէր 25 րուբլի։ Թուրքը մերժում է։ Դէրվիշը վշտանում է և իր գլուխը այնպէս սաստիկ խփում է քարերին և պատերին, որ մինչև նրան իր ընկերների մօտ տանելը, մեռնում է։ Այսպիսի դէպքում չը մեռնելը թուրքերի կարծիքով, անպատւութիւն է դէրվիշի համար։ Նրա մահը բաց է անում ընկերների առջև մուրացկանութեան աւելի լայն ասպարէզ։

ԹԻՖԼԻՍԻ Քաղաքային Ուսումնարանական Մասնաժողովը հրաւիրում է այն անձանց, որոնք կամենում են ուսուցիչների տեղ ստանալ Արուեստագործական դպրոցի թէ տարրական երեք բաժիններում և թէ նոյն դպրոցի առաջին դասատան երեք բաժիններում, յայտնել իրանց պայմանների մասին Քաղաքային քարտուղարին Քաղաքային Վարչութեան բնակարանում, ամեն օր ժամը 12-ից մինչև 2 ժամը կէսօրից յետոյ։ Բաժինները լինելու են ռուսաց, հայոց և վրաց լեզուներով, այսինքն նրանց իւրաքանչիւրի մէջ դասաւանդութիւնը կատարվելու է մայրենի լեզուով։

ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏ քաղաքից մեզ գրում են, որ այնտեղի երկսեռ ուսումնարանների հարցաքննութիւնները վերջացան գոհացուցիչ կերպով։ Աշակերտները բաւական հմուտ են իրանց ուսանելի առարկաների մէջ։

Մեզ գրում են ՆՈՐ-ԲԱՅԱԶԷՏԻՑ որ օգոստոսի 3-ին այստեղ սաստիկ կարկուտ էր եկել։ Բացի լուսամուտների ապակիները կոտրատելուց, կարկուտը բաւական մեծ վնաս տուեց արտերին, հակառակ այն բերրիութեան, որ սպասվում էր այս տարի։

Երևանի «Պսակ» լրագրում կարդում ենք հետևեալը։ «Դարաչիչագից մեզ գրում են, որ յուլիսի 27-ին այնտեղ սաստիկ կարկուտ եկաւ և մի քանի տեղերում արտերին վնասեց»։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՖՐԱՆՍԻԱ

Լրագիրների մէջ կարդում ենք հետևեալ տեղեկութիւնները։

Ֆրանսիական հանրապետութեան նախագահ Ժիւլ Գրեվի ֆրանսիական ազգային երկու ժողովների նախագահների ուղեկցութեամբ ուղևորվեցաւ Շերբուրգ քաղաքը նաւատորմին ներկայ լինելու համար։ Պ. Գրեվի գրականապէս հրաժարվում է ցոյց տալ, որ ինքը իշխանութեան միակ ներկայացուցիչն է, ինչպէս որոշել է ֆրանսիական սահմանադրութիւնը։ Ընդդիմադրական կուսակցութեան լրագիրները նախագահի այդ վարմունքը վերաբերում են ոչ թէ նրա անձնական ցանկութեանը, այլ Գամբետտայի ազդեցութեանը, որը իբր թէ կամենում է իրան Ֆրանսիայի միապետը յայտնել։ Թէպէտ շատերին ծիծաղելի է թւում, որ ֆրանսիական պարապ գահի վրա բարձրանայ Լէօն I, այնուամենայնիւ պատգամաւորների ժողովի նախագահը, անդադար Գրեվիի հետ երևալով, առիթ է տալիս այդ լուրերի յամառութեամբ տարածվելուն։

Եզուիտական միաբանութիւնների հալածված անդամների գանգատները մարտի 29-ի հրամանների կատարելու պատճառով գրեթէ լցնում են ֆրանսիական դատաստանական հիմնարկութիւնները։ Սուրբ հայրերը հեղինակելով «Ծնողների ընկերութիւն», որ ընդունում է եզուիտների ուսումնարանները, մինչև անգամ հարկաւոր չեն համարում ծածկել հասարակութիւնից իրանց նպատակները և գիտաւորութիւնները։ Կղերական կուսակցութեան լրագիրները բացարձակ յայտնում են, որ «Ծնողների ընկերութեան» հիմնելու նպատակն է շարունակել ֆրանսիական երիտասարդութեան կրթութիւնը նոյն ուղղութեամբ և ոգով, ինչպէս եզուիտներն էին անում։ Կղերական ուղղութեան «Francais» լրագիրը ասում է. «Եթէ ի նկատի առնենք, որ մարտի 29-ի հրամանների նպատակն էր փակել հոգևորականների ուսումնարանները, պէտք է համոզվենք, որ «Ծնողների ընկերութեան» հիմնելուց յետոյ կառավարութիւնը յաղթված պէտք է համարել։ Յիշեալ լրագրի մէջ տպված յօդուածից երևում է, որ ծնողների ընկերութեան հիմնելու նպատակն է մարտի 9-ի հրամանների առաջն առնել և որ այդ միջոցը բաւական է համարվում նպատակին հասնելու համար։ Կարելի է հաւատացած լինել, որ Ֆրէյսինէի մինիստրութիւնը գրանով չի խաբվի։ Գամբետտայի օրգան «République Française» այդպիսի կարծիք է յայտնում։ Լրագիրը ասում է որ քաղաքային խորհրդարանների անդամների ընտրութիւնից երևում է, որ ֆրանսիական հասարակութիւնը չափազանց համակրում է կառավարչական այժմեան ձևին և այդպիսի յայտնութիւնից յետոյ հազիւ թէ աջողվի եզուիտներին ծաղրել օրէնքները և կառավարութիւնը։ Նոյնպէս իրանք կղերականներն էլ շատ չեն հաւատում իրանց ընտրած միջոցի աջողվելուն։ «Francaise» լրագիրը ի միջի այլոց ասում է հետևեալը. «Թող չը մոռանայ կառավարութիւնը, որ բոլոր այդ բռնութիւնները կը մտնեն պատմութեան էջերի մէջ, և վաղ թէ ուշ կը զարթի հասարակական խղճմտանքը կառավարութիւնից հաշիւ պահանջելու համար»։ Եզուիտների այս սպառնալիքը հազիւ թէ կարողանայ ազդել կառավարութեան վրա և հազիւ թէ կը կարողանայ ստիպել նրան թողնել իր բռնած ընթացքը։

ԱՖՂԱՆԻՍՏԱՆ

Արդէն երկու օր է, որ Աֆղանիստանից հեռագիրներ չեն ստացվում։ Գեներալ Ռօբերտսի գիտաւորութիւնը՝ Կաբուլից Կանդահար ուղևորվել, վերջին տեղեկութիւնն էր։ Արտասահմանեան լրագիրների տեղեկութիւններից երևում է, որ անգլիացիք գեներալ Ռօբերտսի հեռանալուց յետոյ մտադիր են դատարկել Կաբուլը, որովհետև այդ քաղաքի գրաւելը անգլիական զօրքերով մեծ ծախսեր է պահանջում։ Նոյն լրագիրները ասում են, որ Աֆղանիստանի նոր էմիր Աբդուրախման-խանի խաղաղական նպատակները անգլիացիների վերաբերութեամբ դեռ ևս յայտնի չեն։ Թէպէտ Աբդուրախման իւրաքանչիւր պատահած դէպքին յայտնում է իր համակրութիւնը դէպի անգլիացիները և իր պատրաստակամութիւնը հետևել նրանց խորհուրդներին, բայց մի և նոյն ժամանակ երկիւղ է յայտնում այն դիրքի վերաբերութեամբ, որ կարող են բռնել հարևան ցեղերը։ Էյիւբ-խանի վերջին աջողութիւնը ծանր տպաւորութիւն գործեց նոր էմիրի վրա։ Աբդուրախման-խան շատ ուրախ է, որ կարող է անգլիացիների օգնութեամբ յաղթել և հեռացնել Աֆղանիստանից իր հակառակորդին, բայց թէ ինքը յետոյ ինչպէս կը վարվի նոյն անգլիացիների հետ, ոչոքին յայտնի չէ։

Կանդահարից «Times» լրագրին գրում են, որ քաղաքի մէջ հանգիստ է։ Անգլիացիները ոչնչացրել են Էյիւբ-խանի ամրացած դիրքերը։ Աֆղանցիները քաղաքից հեռացրած են։ Քաղաքի մէջ ընդամէնը 4,500 զինուորներ կան և 15 թնդանօթ։ Մասնաւոր տեղեկութիւններից երևում է, որ Կանդահարի շրջակաների բնակիչները ապստամբվել են և միացել Էյիւբ-խանի զօրքերի հետ։ Քաղաքի մօտ անդադար փոքրիկ կռիւներ են պատահում։

ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԹՈՒՆԱՒՈՐԵԼԸ

«Голосъ» լրագրի մէջ տպված է մի թղթակցութիւն Կ. Պօլսից, որ ի միջի այլոց հաղորդում է հետևեալը։ Թէպէտ Թիւրքիան զարմացնում է ամբողջ աշխարհին իր անկարողութեամբ ըմբռնել եւրոպական կուլտուրան, բայց նա նոյնպէս զարմացնում է ամենքին իր թշնամիներին ոչնչացնելու ընդունակութեամբ։ Այդ կողմից Թիւրքիայի առաջադիմութիւնը չափ չունի. մի չորս կամ հինգ տասնեակ տարիների ընթացքում նա մոռացաւ թէ եւրոպացիների և թէ իր հպատակ քրիստոնեաների հետ իր վարվողութեան ձևը։ Մահմուդ II-ի ժամանակից դուք չէք տեսնի Թիւրքիայի մէջ կախաղաններ, գլխատման բեմեր, կամ անգութ պատիժներ, որոնց առաջ ենթարկվում էին մեղաւոր փաշաները և պատրիարքները։ Այդ բոլորը փոխարինված է աքսորանքով, որոնց ճանապարհին յանկարծակի մահ է պատահում, մի թաս ամենասաստիկ թոյնախառն կաֆէյով և այլ այդպիսի քաղաքավարի միջոցներով։ Այդպիսի «քնքոյշ վարմունքով» օրերումս մեծարվեցաւ Ներսէս պատրիարքը, որ քիչ էր մնում Արեգդին-փաշայի մօտ խմած մի թաս կաֆէի զոհ դառնար։ Հայոց արժանապատիւ հովվի հետ այս դէպքը երկրորդ անգամ է պատահում. առաջին անգամ Սայիդ-փաշայի կիօսկի մէջ պատահեց։ Լաւ իմանալով թէ ինքը ինչ տեսակ աչքի փուշ է թիւրքաց կառավարութեան համար, Ներսէս պատրիարքը միշտ չափազանց զգոյշ է եղել թիւրքաց մինիստրների հետ նրանց կիօսկներում տեսութիւն ունենալու ժամանակ, իսկ մինիստրները իրանց մեծ յարգանքը յայտնելու համար մեծարում էին պատրիարքին մի թաս կաֆէով, կամ շերբեթով։ Այս անգամ պատրիարքը չը կարողացաւ իրան առաջարկած թասը տանտիրոջը վերադարձնել, որ Թիւրքիայի մէջ ընտիր քաղաքավարութիւն է համարվում։ Պատրիարքը հասկացաւ, որ իր կեանքը վտանգի մէջ է և այդ պատճառով նա մի փոքր միայն խմեց կաֆէից, իր հետ պատրաստ ունենալով դեղթափը։

Այդպէս էլ պատահեց. տուն վերադառնալով պատրիարքը զգաց թոյնի ազդեցութիւնը։ Կանչված բժիշկները շտապեցին նրան օգնել և նա ստիպված էր երկու օր անկողնի մէջ անցկացնել։ Մայրաքաղաքի հայ երիտասարդութեան բարկութիւնը չափ չունէր, երբ նա տեղեկութիւն ստացաւ իր սիրած սրբազանի հետ պատահածի մասին։ Ասում են, որ մի օրվայ ընթացքում Արեգդին-փաշա երեք հարիւր անստորագիր նամակներից աւելի ստացաւ, որոնք սպառնում էին թունաւորել թիւրքաց բոլոր մինիստրներին, եթէ կրկնվի այդպիսի նենգութիւն։ Ամենաերևելի հայ տիկինները առաջարկեցին կարգով ծառայել հիւանդ պատրիարքին։

Արեգդին-փաշա հայոց պատրիարքին թունաւորելու իր անաջող փորձից յետոյ, միւս օրը սուլթանի պալատական բժշկի հետ շտապեց այցելել պատրիարքին։ Ասում են, որ առաջ Ներսէս պատրիարքը հրաժարվեցաւ նրան ընդունել պատճառ բերելով իր ծանր հիւանդութիւնը, բայց Արեգդին-փաշա պատասխանեց, որ սուլթանը ցաւելով տեղեկացաւ արժանապատիւ սրբազանի հիւանդութեան մասին և յանձնեց իրան անձնականապէս տեղեկանալ սրբազանի առողջութեան մասին և ուղարկեց իր բժշկին։ Վերջապէս Արեգդին-փաշա ընդունվեցաւ պատրիարքի ննջարանի մէջ, որտեղ նա առաջարկեց պալատական բժշկի ծառայութիւնները։

Ոչ, պատասխանել է պատրիարքը, իմ ժողովրդի փորձից ես համոզվել եմ, որ թիւրքաց դեղը հային առողջութիւն չէ տալիս, այդ պատճառով ես հաստատ վճռել եմ եւրոպական դեղով բժշկվել։

Այդ ծանր անպարկեշտութիւնից վիրաւորված, Արեգդին-փաշա մի փոքր կանգնել է իր տեղը և յետոյ հեռացել սուլթանի բժշկի հետ։

Ես միշտ այն կարծիքի եմ եղել, որ Թիւրքիայի ընդդիմադրութիւնը Եւրոպայի միացեալ կամքին կատարեալ յիմարութիւն է։ Բ. Դուռը մինչև վերջին րոպէն վիրաւորված ասպետի դերը կը կատարի, իսկ ինքը ծածուկ կը ծաղրի այդ կատակերգութեան հանդիսատեսներին։ Երբ Եւրոպայի համաձայնութիւնը ծայրայեղութեան կը հասնի, Թիւրքիան նրա բոլոր պահանջները իսկութեամբ կը կատարի, որովհետև մարգարէի տեղապահների համար հեշտ չէ տեղափոխել իրանց հարեմները Բոսֆորի բանաստեղծական ափերից Փոքր-Ասիայի աւերակները։ Այդ պատճառով չերնոգորիական հարցի մէջ արած զիջողութիւնից յետոյ դուք կը տեսնէք նոյն զիջողութիւնը յունական և հայկական հարցերի մէջ, միայն թէ չը խանգարվի եւրոպական համաձայնութիւնը։

Հայկական խնդրի վերաբերութեամբ մեծ պետութիւնների ներկայացուցիչների մէջ կատարեալ համաձայնութիւն է տիրում։ Հայաստանի համար Ռումելիայի նման բացառիկ դրութիւն կը պահանջվի։ Երկիրը բաղկացած կը լինի հետևեալ վեց նահանգներից. Էրզրումի, Վանի, Մուշի, Դիարբեքիրի, Երզնկեան-Սիվազի և Տրապիզոնի մի մասից։ Հայաստանի յիշեալ նահանգների մէջ թիւրքաց պաշտօնական «Սալ-նամէ» օրացոյցի համեմատ 2½ միլիոն բնակիչ կայ, որի երկու երրորդականը քրիստոնեաներ են։ Վերջնական առաջարկութիւնը Թիւրքիայի կողմից ընդունելուց առաջ, եւրոպական դեսպանները այս անգամ էլ կամենում են մինչև վերջ հաստատամիտ լինել, թողնելով վերջին և անփոփոխ խօսքը երրորդ կարգի համար։

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԵՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 11 օգոստոսի։ «Правит. Вѣстн.» լրագիրը հաղորդում է. Բարձրագոյն Կարգադրող Մասնաժողովի փակվելուց յետոյ հսկողութեան տակ եղած անձանց մասին ունեցած տեղեկութիւնների քննութիւնը յանձնված է ներքին գործերի մինիստրին։ Հսկողութեան տակ եղած անձանց թիւը ամբողջ Կայսրութեան մէջ 1696 աւելի չէ։ Բարձրագոյն Մասնաժողովը մայիսից մինչև օգոստոս [illegible] վերադարձրեց հսկողութեան տակ եղած 115 անձանց, որոնցից 30-ին թոյլ է տուած մտնել համալսարան, ընդհատված ուսումը շարունակելու համար։

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ